Եվրոպայի խորհուրդ և Եվրոպական միություն Ծրագրային համագործակցության կառուցակարգ (ԾՀԿ) 2015-2020թթ. Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

Աշխատենք միասին՝ խթանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը:

Programmatic Cooperation Framework for Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe



Եվրոպայի խորհուրդը և Եվրոպական միությունը (ԵՄ) առանձին կազմակերպություններ են, որոնք ունեն տարբեր, սակայն փոխլրացնող դերեր։

Եվրոպայի խորհուրդն աշխատում է իր 47 անդամ պետությունների հետ համատեղ՝ ամրապնդելու մարդու իրավունքները և ժողովրդավարությունը մայրցամաքում և դրա սահմաններից դուրս։

ԵՄ-ն համախմբում է իր 28 անդամ երկրներին թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական առումով՝ ներդաշնակեցնելով օրենսդրությունն ու գործելակերպերը քաղաքական որոշակի ոլորտներում։

ԵՄ-ն ստեղծել է Արևելյան գործընկերությունը՝ իր արևելյան գործընկերների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի հետ ավելի սերտ համագործակցելու նպատակով։

Այս երկու կազմակերպությունները միասին սերտորեն աշխատում են այն ոլորտներում, որտեղ ունեն ընդհանուր շահեր՝ մասնավորապես խթանելով մարդու իրավունքները և ժողովրդավարությունը Եվրոպայում ու հարակից տարածաշրջաններում։

Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի միջև համագործակցությունը հնարավորություն է ընձեռում այս կազմակերպություններից յուրաքանչյուրին օգտվել մյուսի առանձնահատուկ ուժեղ կողմերից՝ այդպիսով աջակցելով միմյանց աշխատանքին։

Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունները

Ալբանիա, Անդորա, Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոլդովայի Հանրապետություն, Մոնակո, Մոնտենեգրո, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սերբիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն», Թուրքիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն։

Եվրոպական միության 28 անդամ պետությունները

Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոսի Հանրապետություն, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն։

ԻՆՉԷ ԾՀԿ-Ն

2014թ. ապրիլին Եվրոպական միությունը (ԵՄ) և Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) Մտադրությունների մասին հռչակագրով համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Ծրագրային համագործակցության կառուցակարգի» (ԾՀԿ) շրջանակներում:

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ իրականացնելու ներպետական բարեփոխումներ, որոնք առավել կմոտեցնեն նրանց Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության չափանիշներին մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում:

ՈՐՔԱՆ Է ԾՀԿ-Ի ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԾՀԿ-ն ստորագրվել է 2014թ. դեկտեմբերին և իրականացվելու է երկու փուլով՝ 2015-2017թթ. և 2018-2020թթ.: Միջանկյալ գնահատումը տեղի կունենա 2017թ., իսկ եզրափակիչ գնահատումը՝ 2020թ.:

ՈՐՔԱՆ Է ԾՀԿ-Ի ԲՅՈՒՋԵՆ

Իրականացման առաջին փուլի (2015-2017թթ.) բյուջեն €33.8 միլիոն է: ԾՀԿ-ն 90%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 10%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից: Այն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը:

ԻՆՉԷ ԱՆԵԼՈՒԾԿ-Ն

Եվրոպական միության հետ ԾԷԿ-ի համար համագործակցության հինգ գերակա ոլորտներ (կամ «թեմաներ») են սահմանվել : Այս հինգ թեմաների ներքո կան 15 ենթաթեմաներ, որոնք հանգեցնում են երկրին ներհատուկ և տարածքային 50 գործողությունների:

Թեմա I՝ Մարդու իրավունքների պաշտպանություն և խթանում

- մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների իրականացման ամրապնդում տարածքային և ներպետական մակարդակներում
- ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն
- հավասարության և մարդկային արժանապատվության խթանում
- մարդու իրավունքների ոլորտում կրթության և ժողովրդավարական քաղաքացիության խթանում

Թեմա II՝ Արդարադատության ապահովում

- արդարադատության անկախության և արդյունավետության ամրապնդում
- սահմանադրական արդարադատության ամրապնդում
- քրեակատարողական բարեփոխումների ամրապնդում (պատժիչ մոտեցումից դեպի վերականգնողական մոտեցում)

Թեմա III՝ Պայքար իրավունքի գերակայության նկատմամբ սպառնալիքների դեմ

- պայքար կոռուպցիայի դեմ և լավ կառավարման խթանում/պայքար փողերի լվացման դեմ
- քրեական արդարադատության գործողություններ կիբեռհանցագործությունների ուղղությամբ

Թեմա IV՝ Հակազդում տեղեկատվական հասարակության մարտահրավերներին

- բարելավել լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը, բազմակարծությունը և բազմազանությունը
- տեղեկատվական հասարակություն և ինտերնետի կառավարում
- խթանել տվյալների պաշտպանության իրավունքը

Թեմա V՝ Ժողովրդավարական կառավարման խթանում

- աջակցություն ընտրական ոլորտում՝ ընտրական օրենսդրության և գործելակերպի բարեփոխում
- տեղական կառավարման ինստիտուցիոնալ կառուցակարգերի ամրապնդում

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը և Նախարարների կոմիտեն սահմանում են անդամ պետությունների հետ համագործակցության գերակա ոլորտները, և դրանք արտացոլվում են երկրների Գործողությունների ծրագրերում:

Եվրոպայի խորհուրդը բազմաինստիտուցիոնալ լինելու առավելություն ունի, ինչը ԾԷԿ-ին հնարավորություն կտա Խորհրդարանական վեհաժողովի և Տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի միջոցով Արևելյան գործընկերության բոլոր երկրներում ներգրավել տարբեր հաստատություններ և շահառուներ ներպետական, տարածքային և տեղական մակարդակներում: :

ԾԷԿ բոլոր գործողությունները կանդրադառնան փոխհատվող խնդիրների, ինչպիսիք են՝ գենդերային հիմնուղղորդումը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, և կերաշխավորեն քաղաքացիական հասարակության լիարժեք ներգրավվածությունը ԾԷԿ-ի իրականացմանը:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ԾՀԿ-Ն

ԾՀԿ-ի թե՛ երկրին ներհատուկ, և թե՛տարածքային գործողությունները մշակվել են ազգային շահառուների հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպայի խորհրդի՝ երկրին ներհատուկ Գործողությունների ծրագրերի շրջանակում: Գործողությունների ծրագրերը նախապատրաստվում են Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի մարմինների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա և համապատասխանում են ներպետական բարեփոխումների օրակարգերին:

ԾՀԿ գործունեությունը ծավալուն և էական փորձի աղբյուր կհանդիսանա Արևելյան գործընկերության երկրների հաստատությունների կարողությունների ամրապնդման համար՝ իրականացնելու ներպետական բարեփոխումներ և դրանք առավել մոտեցնելու Եվրոպայի խորհրդի չափանիշներին՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում: Դա իրագործվելու է բազմապիսի միջոցառումներով՝ համաժողովներ, աշխատանքային խմբեր, ցանցային համագործակցություն, վերլուծական զեկույցներ և վերապատրաստման դասընթացներ՝ Եվրոպայի խորհրդի անձնակազմի և միջազգային փորձագետների գլխավորությամբ:

Ներգրավված դերակատարները ներպետական շահառուներ են, որոնք որոշիչ դեր են խաղում բարեփոխումների իրականացման ոլորտում՝ խորհրդարաններ, կառավարության մարմիններ բոլոր մակարդակներում (արդարադատության, ֆինանսների, ներքին գործերի, առողջապահության, կրթության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության և հանրային կառավարման համար պատասխանատու նախարարություններ), պետական հաստատություններ համապատասխան ոլորտներում, ինչպիսիք են՝ կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարը, դատախազները, իրավակիրառ մարմինները, քրեակատարողական հաստատությունները , կենտրոնական և տեղական ընտրական հանձնաժողովները, օմբուդսմենները, դատաիրավական համայնքը, դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, իրավաբանները, լրատվամիջոցները, տեղական և տարածքային իշխանությունները, ոչ կառավարական կազմակերպությունները, կրթական հաստատությունները, ինչպես նաև լայն հանրությունը:

Մոնիթորինգի մարմիններ

Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի մարմինները կազմված են անկախ փորձագետներից, ովքեր մշտադիտարկում են Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների իրականացումը և հանձնարարականներ են մշակում: Մոնիթորինգի այս մարմինների թվում են՝ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳՐԵԿՈ/GRECO), Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (ԱԱԵՇ/CEPEJ), Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ/CPT), Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբը (ԳՐԵՏԱ/GRETA), Փողերի լվացման դեմ միջոցների գնահատման և սահմանափակության ֆինանսավորման դեմ պայքարի գծով փորձագետների կոմիտեն (ՄՈՆԻՎԱԼ/MONEYVAL), Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (ԱՓԾԿ/FCNM) հարցերով խորհրդատվական հանձնաժողովը, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ/ECRI), Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան (ԳՐԵՎԻՈ/GREVIO), այդ թվում նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

©pbombaert/Shutterstock.com

Ո՞Վ Է ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՀԿ-Ն

Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի գրասենյակների, Եվրոպական միության պատվիրակությունների և ԾՀԿ ազգային համակարգողների միջև կստեղծվի մշտական համակարգման մեխանիզմ՝ Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, ազգային շահառուների և գործընկերների, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների միջև լիարժեք և համապարփակ համակարգում երաշխավորելու նպատակով:

Այն կապահովի Արևելյան գործընկերության երկրներում առկա և նախատեսվող՝ երկրին ներհատուկ և տարածաշրջանային այլ գործողությունների միջև փոխադարձ կապը, ինչպես նաև կերաշխավորի շոշափելի արդյունքներ և ԾՀԿ-ի ազդեցությունը վերջնական շահառուների և հանրության համար:

ԱՐՅՈ՞Ք ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԵՆ

Բարեփոխման գործընթացի հանդեպ ազգային շահառուների սեփականատիրական մոտեցումը կարևոր կլինի ԾՀԿ-ի արդյունքակենտրոն իրականացման և կայունության համար: ԾՀԿ գործողությունները բևեռվում են ներպետական իրավական շրջանակների, ներպետական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և բարելավման, ինչպես նաև գործընկերների և ազգային շահառուների մասնագիտական հմտությունների խթանման վրա: Կայունությունը ձեռք կբերվի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման և ազգային անձնակազմի վերապատրաստման միջոցով:

ԾՀԿ-ն կնպաստի ազգային դերակատարների գիտելիքների և կարողությունների կերտմանը, որպեսզի նրանք կարողանան խթանել նպատակների իրականացումն իրենց գործընկերների շրջանում երկրի և տարածաշրջանի ներսում, ինչպես նաև ԾՀԿ-ի իրականացման փուլի ավարտից հետո:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՏՆԵԼ

- Արևելյան գործընկերության Ծրագրային համագործակցության կառուցակարգի ինտերնետային էջ՝
  http://eap-pcf-eu.coe.int
- Եվրոպայի խորհուրդ՝ Գլխավոր ծրագրերի տնօրինության գրասենյակի ինտերնետային էջ՝
  www.coe.int/en/web/programmes
- Եվրոպական միության Արևելյան գործընկերության ինտերնետային էջ՝
  www.eeas.europa.eu/eastern
- Ֆեյսբուք՝
  www.facebook.com/pages/CoE-EU-Eastern-Partnership-PCF
- Թվիթեր՝
  https://twitter.com/CoeEapPCF
- Էլ-հասցե՝
  pcf@coe.int

PREMS 101815 – Photos: Council of Europe

HYE

The Council of Europe is the continent's leading human rights organisation. It comprises 47 member states, 28 of which are members of the European Union. All Council of Europe member states have signed up to the European Convention on Human Rights, a treaty designed to protect human rights, democracy and the rule of law. The European Court of Human Rights oversees the implementation of the Convention in the member states.

www.coe.int

The European Union is a unique economic and political partnership between 28 democratic European countries. Its aims are peace, prosperity and freedom for its 500 million citizens – in a fairer, safer world. To make things happen, EU countries set up bodies to run the EU and adopt its legislation. The main ones are the European Parliament (representing the people of Europe), the Council of the European Union (representing national governments) and the European Commission (representing the common EU interest).

http://europa.eu

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe